

**5.7. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը
2018 թվականի III եռամսյակում և հունվար-սեպտեմբերին**

Ըստ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ամփոփ տեղեկատվության, 2018թ. III եռամսյակում և հունվար-սեպտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

**Ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման
գործունեության հիմնական ցուցանիշները**

	III եռամսյակ	Հունվար- սեպտեմբեր
<i>միավոր</i>		
Ստանդարտացում		
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	130	301
այդ թվում՝		
ՀՀ ստանդարտներ	2	11
Միջպետական ստանդարտներ	110	220
միջազգային և եվրոպական ստանդարտներ	18	70
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	4	12
Սերտիֆիկացում		
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	147	439
որից՝		
ներմուծվող արտադրանքի համար	104	320
արտահանվող արտադրանքի համար	7	22
Հավատարմագրում		
ՀՀ տարածքում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների քանակը	-	-
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	3	5